

Ազգի մը ապագայ կեանքի բարեօրոման առաջին պայմանն է Միութիւնը:

« Միութիւն » ը ամեն տեղ ձրի կը ղրկուի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագրութեան կը պատկանի:

Ա - ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1896 ԱԹԵՆՔ

ԹԻԻ 4

Ո՞վ է

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

« Միութիւն » ի նախորդ թիւով խօսեցանք նախ Կ. Պոլսի մեծ ցոյցին և Հայերի ընդհանուր կոտորածի մասին, յետոյ տեսութիւն մը ըրինք ցոյցին օգտակարութեան նկատմամբ և մեր յօգուածը վերջացուցինք, խոստանալով որ երկրորդ յօգուածի մը մէջ պարզենք թէ ո՞վ էր, ըստ մեզ, ցոյցին առթիւ և անոր հետեւանքով առաջ եկած ամենածանր և անփոխարինելի կորուստներու բո՛ւն պատտօնանատուն:

Այժմ կուգանք կատարել մեր խոստումը:

Եւ առանց վարանելու, առանց պատի պատ դարձուածքներու և ծեծեքուծումներու, կատարեալ համոզմամբ, կ'ըսենք թէ ծանր կորուստներու պատասխանատունն են ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ ԷՐ, այսինքն երկու Յեղափոխական մարմիններու անջատ գործունէութիւնը, իրարու մասին իրենց ցոյց տուած անվստահութիւնը և այն թաքուն հակառակութիւնը, որ զարմանալի և ցաւալի հակասութեամբ, կը տիրէ միեւնոյն նպատակի ծառայող այդ երկու Յեղափոխական մարմիններու միջեւ:

Երթադրենք պա՛հ մը որ այդ ցոյցը տեղի ունենար երկու մարմիններու համերաշխ գործունէութեամբ, ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը. գործիչներու շատ աւելի մեծ թիւ մը պիտի մասնակցեր ցոյցին, զիմադրութիւնը աւելի ուժեղ,

թշնամիին կորուստը աւելի մեծ և սարսափը շատ աւելի ահեղ պիտի ըլլար: Խուժանք, որ անդէններու դէմ դիւատիչ գայլ մը դարձած էր, գինուած հերոսներու դիմաց նապաստակ պիտի դառնար, ինչպէս փորձը ցոյց տուաւ: Օսմանեան պանքայի դէպքը ամենէն զօրաւոր ապացոյց է մեր ըսածին. քսանհինգ հոգի, ռուսներով ու ռէվոլվէրներով գինուած, կարող եղան զիմադրել թէ խուժանին և թէ կանոնաւոր բանակի մը: Եթէ բաւական գործիչ ըլլար վէջտեղ միեւնոյն վայրկենին ուրիշ քանի մը մեծ շէնքերու տիրելու կարող, ինչ որ միութեամբ շատ կարելի էր, այսօր փոխանակ 10000 զօհերու վրայ ողբալու գուցէ յաղթական տօներ պիտի կատարէինք ամէն կողմ:

Ամամթիոյ մէջ հինգ հերոս նոյնպէս կարող եղան երկու օր դիմադրել գինուորներու և խուժանի յարձակումներուն, ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը եթէ փոխանակ հինգի՝ յիսուն կուէրին: Խառնակի մէջ եթէ քսան ռէվոլվէր և քսան ռումբ ըլլար, նոյնպէս փոխանակ մեր անմեղ զոհերուն վրայ լալու, թշնամիին դիակներուն հոտովը պիտի արբենայինք, որովհետեւ թշնամիին դիակը միշտ անոյշ կը հոտի:

Կարծենք պէտք չի կայ շատ բազմապատկելու մեր օրինակները, մանաւանդ թէ ինչ սը կ'ուզենք հաստատել արդէն ծանօթ ճշմարտութիւն մըն է, միշտ երկու ձեռքը շատ աւելի գործ կ'ընայ տեսնել քան մէկը:

Փափուկ կէտ մը կը ներկայանայ հոս:

Անմիաբանութեան արգելքը ո՞ր կողմէն է:

Մենք որ, ինչպէս յայտարարած ենք արդէն, որ և է կուսակցութիւն չենք ներկայացներ և որ և է կուսակցութեան գործիք չենք, միմիայն մեր տեսածներէն և առած ստոյգ տեղեկութիւններու վրայ յենլով չենք վարանիր ըսելու որ այդ անմիաբանութեան պատասխանատուութիւնը երկու կողմերուն վրայ հաւասարապէս կը ծանրանայ:

Իրաւ է որ թէ անցած տարուան Ընչակեան ցոյցին և թէ այս տարուան Դաշակեան ցոյցին ատեն երկու մարմինները մերձեցումի փորձեր ըրին, բայց խնդրին տեղեկ անձեր գիտէն թէ այդ փորձեր առերևայթ էին, զգուշաւոր էին. վերջապէս անկեղծ, եղբայրական չէին և ատոր համար որ և է դրական արդիւնքի մը չյանգեցան:

Այժմ նոր ջանք մը կը տեսնուի մերձեցումի համար, այս տնգամ աւելի անկեղծ, ինչպէ՞ր կը կարծենք: Կերեայ որ Անմիաբանութեան հետեւանքները ոչսած են շատ ակներեւ ըլլալ: Անկեղծ գործիչներ, բուն սուրբ գործին համար աշխատողները, ժամը հասած կը համարին ընդհանուր եղբայրական համբոյրի մը մէջ խեղդելու կարգ մը անձնական սին փառասիրութենէ, գծուած զգացումներէ, անխորհուրդ կուսակցամոլութենէ ծնած այդ Անմիաբանութեան հրէշը:

Շատեր գուցէ մտածեն թէ ա՛լ ուշ է. մենք երբեք ուշ մտածած չենք համարիր այդ տեսակ միութիւն մը և վստահ ենք թէ մեր կենսական սւժերը երբ փոխանակ անջատ կերպով վատնելու ի միցուենք և այնպէս մարտնչինք մեզ

ընաճին՝ ընկելու ուխտող թշնամիին դէմ՝ Յաղթութեան և Ազատութեան արեւը շատ աւելի շուտ պիտի ծագի Ըայաստանի վրայ:

ՄԵՐ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ

«Միութիւն» ի այս թիւին հետ լոյս պիտի տեսնէ «Միութիւնի յաւելում» ը որ ասկէ ետքը կանոնադրապէս պիտի հրատարակուի տասներկինգ օրը մի անգամ, վիճաբարութեամբ, և պիտի վաճառուի հատը 10 Լեւիթա և արտասահմանի մէջ 15 Սանթիմ, բոսթի ծախքը խումբադրութեան վրայ:

Միութիւնի յաւելումը բոլորովին անշատ է ՄԻՈՒԹԻՒՆ ամսաթերթէն որ պիտի շարունակուի նոյն ուղղութեամբ հրատարակուիլ ամիսը մի անգամ և ձրիապէս պիտի տրուի ընթերցողներու:

Իսկ յաւելումը մը հրատարակելով ամիսը երկու անգամ մեր նպատակն է առանց հայերէն թերթի չձգել շատ մը գաղթական Ըայեր, որոնք Պոլսոյ վերջին ցոյցէն ի վեր տարածուած են Յունաստանի, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Պարսկաստանի մէջ և այլուր: Իրաւ է որ օտար երկիրներու մէջ կը հրատարակուին զանազան հայերէն թերթեր, բայց այդ թերթերը գրեթէ բոլորն ալ իրենց համար նպատակակէտներ ունին և բրոքականութիւններ են, իսկ գուտ տեղեկութիւններ պարունակող թերթ մինչև հիմայ հազիւ երկու հատ ունեցած ենք. այսինքն Մարտիկոյ «Արմէնիա»ն և Վառնայի «Իրաւունք»ը. և սակայն այս երկու թերթերը անբաւական կուգան յորմէ-յետոյ հազարաւոր Ըայեր կը ցրուին ամէն կողմ: Ասոր համար կը կարծենք թէ մեր այս նոր հրատարակութիւնը, իր գիւրամատչելի գնով, ընդունելութիւն պիտի գտնէ ընթերցասէր հասարակութենէն:

«Միութիւնի յաւելում» ը պիտի պարունակէ մասնաւորապէս Ըայական խնդրին վերաբերեալ տեղեկութիւններ, Եւրոպական թերթերէ քաղուած:

Պիտի հրատարակէ Պոլսէն թղթակցութիւններ:

Նոյնպէս զանազան Ըայաբընակ երկիրներէ թղթակցութիւններ՝ որով կը յուսայ միութեան և յարաբերութեան կապ մը ըլլալ մեր Ըայրենակից եղբայրներու միջև:

Ասոնցմէ զատ պիտի տայ նաև օրուան քաղաքական կարևոր խնդիրներու վրայ ծանօթութիւններ:

Միութիւնի յաւելումը եթէ ընդունելութիւն գտնէ շարժաթերթի պիտի վերածուի և պիտի հրատարակուի տպագրութեամբ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Պ. Տիգրան Երկաթ Աթէնքի մէջ, Պառնասոսի սրահը, բանաստեղծութիւն մը արտասանեց, ֆրանսերէն լեզուով: Ըայազգի երիտասարդ բանաստեղծ մէկուկէս ժամ խօսեցաւ և պերճախօս կերպով պարզեց Յունաց և Ըայոց անցեալ յարաբերութիւնները, երկու ցեղերու նոյնութիւնը, նկարագրի նմանութիւնները, ինչպէս նաև երկու ազգերուն վիճակակցութիւնը: Պ. Երկաթ ոտոմական աեոսութիւն մը ըրաւ նաև այն Ըայ իշխաններու մասին որոնք իշխած են Բիւզանդիոնի մէջ և իր բանաստեղծութիւնը աւարտեց պարզելով այն քաղաքական և տնտեսական առաւելութիւնները զորս յոյն և Ըայ ազգերը պիտի ունենան օր մը, երբ այս վերջինները թօթափելով թրքական բարբարոսութեան լուծը՝ անկախ պետութիւն մը հիմնեն կիլիկիոյ կամ Փոքր Ասիոյ մէջ:

Պառնասոսի սրահը լեցուն էր: Մամուլի ներկայացուցիչներ, գիւնդրակարներ, փաստաբաններ, ուսանողներ և տիկիներ ներկայ էին: Պ. Երկաթի բանաստեղծութիւնը ընդմիջուեցաւ բուռն ծափահարութիւններով և Յունական թերթերը մեծամեծ գովեստներով խօսեցան Ըայ զրադիտին վրայ և արտասուեցին իր բանաստեղծեան զանազան մասերը: Պառնասոսի նախագահը յայտնած է նաև որ ժողովին որոշումը Պ. Տիգրան Երկաթ պատուոյ անդամ ընտրուած է Պառնասոսի զբօրական Սիլլոզոսին:

Պ. Երկաթի բանաստեղծութիւնը հայերէնի թարգմանուած և տես-

րակի ձեւով քիչ ատենէն հրապարակ պիտի ելլէ «Միութիւն» ի Տպարանէն:

Կ. Պոլսէն եկած նամակներ, ինչպէս նաև Եւրոպական թերթեր, կը ծանուցանեն թէ Տատեան Արթին փաշայի որդին՝ Տիրան պէյ՝ Եւրոպայի մէջ պտոյտ մը ընկելու համար ճամբայ է ելեր: Պ. Տիրան պէյ պաշտօն ունի եղեր համազելու հայ Յեղափոխականները որ փոխանակ Սուլթանի կառավարութեան դէմ կուռելու, ընդհակառակը շնորհակալութեան և երախտագիտութեան թուղթ մը տան Սուլթանին: Ի փոխարէն Սուլթանն ալ Արթին փաշան Արտաքին գործոց նախարար և մեծ ներքինապետ պիտի ընէ եղեր, իսկ Տիրան պէյը պալատի գիւնդին քարտուղարապետ: Տիրան պէյ այս փափուկ պաշտօնը գլուխ հանելու համար իրեն անձնական քարտուղար ընտրած է Պ. Ա. Աճէմեան երիտասարդը, որ տաճկական ջըմանակներու մէջ խիստ գնահատուած է իր ֆիզիքական առաւելութիւններուն համար: Տիրան պէյ արդէն ծանօթ համբաւ մը կը վայելէ իր մտային տկարութեամբը և գինարբուններու և խաղաժողներու աշխարհին մէջ գործած շահատակութիւններովը:

Վատահ ենք որ մեր Յեղափոխականները պէտք եղած արժանի ընդունելութիւնը պիտի ընեն այս չքնաղ զոյգին:

Աթէնքի նպաստամատոյց նախորդ Յանձնախումբը հրաժարականը մատուցանելով՝ իր քսանմէկ օրուան գործունէութեան ընդհանուր հաշուէկշիւը պատրաստած է, որմէ կը տեսնուի թէ՛ սոյն Յանձնախումբը 3933 տրախմի հաւաքած և բաժնած է Ըայ կարօտելոց: Սոյն հաշուէկշիւէն կը տեսնենք թէ Պ. Գրիգոր Մէօհտիմէտեան, Եգիպտոսեան բարեսէր ազգայինը նուիրած է 1429 տրախմի, թատերական ներկայացումէն գոյացած է, զուտ հասոյթ, 662 տրախմի, Ամերիկայի

Թէօսօֆիստ ընկերութեան անդամներէն առնուած է 595 տրախմի, Անգլիական Դեսպանը նուիրած է 200 տրախմի, նոյնպէս Եւրոպացի երկու օրիորդներ տուած են 200 տրախմի, Բիրէէն անցնող զանազան հայ ուղևորներէ հաւաքուած է 260 տրախմի, իսկ մնացածը զանազան անհատական նուիրատուութիւններէ գոյացած է:

Ինչպէս յայտնի է այժմ նոր Յանձնախումբ մը անցած է պաշտօնի գլուխ, Աթէնքի և Բիրէի հայ դաղթականութեան կողմէ ընտրուած: Սոյն Յանձնախումբ կը կադկանայ տասնըմէկ անդամներէ: Կը յուսացուի որ այս նոր նպաստամատոյց մարմինը կարող պիտի ըլլայ հնոյն տեղը բռնել, դռնէ Յանձնախումբին անդամներուն փոյթեռանդութիւնը իրաւունք կուտայ մեզ այնպիսի յստալու:

Ամեն պարագայի մէջ մեր համակրանքը կը յայտնենք հրապարակաւ սոյն երկու նպաստամատոյց Յանձնախումբերուն:

Ինչպէս յայտնի ճամբորդութեանէն ետքը ահաւորիկ լուր կը հասնի թէ Ընչակեան նախորդ վեհապետ Պ. Նազարպէկ ևս ուղևորութեան ձեռնարկած՝ և արդէն ժամանած է Եգիպտոս: Պ. Նազարպէկ կ'երևայ որ խիստ ծածուկ կերպով կը ճամբորդէ որովհետեւ ո՛չ Եւրոպական թերթերը ո՛չ ալ հեռագրական գործակալութիւնները մինչև հիմայ բան մը չեն գրած այդ տեղափոխութեան մասին:

Ինչո՞ւ Եգիպտոսէն կը կսկսի Պ. Նազարպէկ իր ուղևորական շըրջանը, արդեօք անո՞ր համար զի Լէյքի բանն թէ «յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ»:

Կ. Պոլսէն առնուած տեղեկութիւններէն կ'երևայ որ Աբիկ Ունձեան միշտ բանտարուկած կը մնայ, իր դատաստանը որ 5 հոկտեմբերին պիտի տեսնուէր, յետաձգուել է, չգիտցուիր ինչ պատճառաւ:

ՆՈՒՆԵՐ

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք թէ Գահիրէ պատուարժան աղգայինները «Միութիւն» ի համար իրենց ունեցած համակրանքի մի հնչուն ապացոյցը տուած են 35 Ֆրանք հաւաքելով: Սոյն գումար պիտի ծառայէ մասնաւորապէս մեր տպարանի պակաս գիրքերը լրացնելու համար: Սոյն գումարը առ այժմ կը գտնուի մեր Գահիրէի սործակալ Պ. Արամ Բագրատունիի քով:

Ահաւասիկ նուիրատուներու անունները:

Ա. Բագրատունի ֆու. եգ. 10	
Պ. Վ.	5
Կ. Էմիր	5
Ս. Զիմէն	5
Ա. Ղ.	5
Գ. Ղ.	5

Գումար 35

Այս առթիւ կը ծանուցանենք թէ մեր պակաս գիրքերը ապսպրած ենք արդէն և «Միութիւն» ի հինգերորդ թիւը պիտի կրնանք հրատարակել ամբողջական գիրքերով:

ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ

Պիլիսոնի նախորդ Թրքական հիւպատոս Տագէս Էֆէնտի վերասկսած է հրատարակել «Ավընիո» ֆրանսերէն թերթը, Աթէնքի մէջ: Սոյն նոր թերթը շաբաթը երկու անգամ լոյս կը տեսնէ: Արդէն հրապարակ ելած են առաջին երկու թիւերը:

Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք հայազգի հրապարակագրին որ ոկսած է հայկական դատը պաշտպանել իր պերճախօս գրչովը:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Անգլիական «Մոռնինկ Բօսթ» թերթը կը գրէ թէ ռուսական մարտանաւները պիտի պաշտպանեն Սուլթանը ամէն յարձակումի դէմ:

*** Անգլիական «Սթանտար» թերթը կը ծանուցանէ թէ Պապը

նոր նամակ մը գրած է Սուլթանին ի նպաստ հայերուն:

*** Կ. Պոլսէն զրկուած հեռագիր մը կ'ըսէ թէ նախարարներու խորհուրդը որոշած է ելնական ներքին միջոցներու դիմել, բանակին և վարչական պաշտօնեաներու չվճարուած ամսականները տալու համար:

*** Անգլիական «Սթանտար» թերթը կը յայտարարէ թէ Անգլո-ռուսական դաշնակցութիւն մը անխուսափելի է:

*** Կ. Պոլսէն կը հեռագրուի թէ պետութիւններու դ'սպանները բացարձակապէս մերժեցին Բ. Դրան առաջարկը որ կ'ուզէր օտար նաւերու մէջ խուզարկութիւններ ընել հայեր փնտռելու համար:

*** Ըստ մէկ կը հեռագրեն թէ հակառակ Կ. Պոլսէն եկած հանդարտեցուցիչ լուրերու, պաշտօնական չրջանակներու մէջ միշտ վտանգալից կը նկատուի կացութիւնը: Կը հաստատուի թէ իտալական նաւատորմը, որ Թրքական ջուրերուն մէջ կը գտնուի, քիչ ատենէն աւելի պիտի ջորացուի:

*** Բարիզէն 18 հոկտեմբեր թուականով հեռագիր մը կ'ըսէ թէ՝ ամբողջ շաբաթ մը անընդհատ հեռագիրներ փոխանակուեցան Լոնտոնի, Բարիզի և Ս. Բեդերպուրկի դահլիճներուն միջև, այսուհանդերձ մինչև հիմայ ոչ ոք կարող եղած է գիտնալ սոյն հեռագիրներուն պարուսակութիւնը:

*** Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը որոշած է երեք մեծ մարտանաւ եւս շրջել Թրքական ջուրերը:

ԱԹԷՆԻ

Հայ Փախստականները

Երեք շաբաթէ ի վեր Հայ փախստականներու խումբեր չեն հասնիր Յունաստան, ասիկայ կրնանք բարեբաղդութիւն մը համարիլ, մասնաւոր երբ մեր աչքին առջև պարզուած՝ կը տեսնենք Բիրէի, Աթէնքի և վրաններուն տակ գտնուող փախստականներուն խղճալի վիճակը: Նպաստամատոյց Յանձնաժողովը, հակառակ իր բարի կամեցողութեան, հազիւ զոյգն օգնութիւն մը

կրնայ ընել այդ թշուառներուն, իր ձեռքը եղած խիստ անբաւական միջոցներով:

Վրաններուն տակ մանաւանդ, ուր 400 հոգի ապաստանած են, սրտածմլիկ տեսարան մը կը պարզուի, յորմէյիտէ ցուրտը և անձրեւները սկսած են: Սնունդի անբաւականութիւնը, տաք կերակուրի չը գոյութիւնը, խոնաւ հոգի վրայ նընջելը, անմաքրութիւնը, իրենց տըխուր հետեւանքները սկսած են ցոյց տալ, ամէն օր հիւանդներ, մանաւանդ թանջէ տարապոզներ կ'աւելնան. և ինչ պիտի ըլլայ այդ թշուառներուն վիճակը երբ օգերը աւելի ցրտեն:

Կը լսենք թէ Յունական կառավարութիւնը որոշած է տուներու մէջ սպասարարներու տալ վրանաբնակ հայերուն: Իցիւ թէ այս որոշումը ժամ առաջ գործադրուէր:

Պէտք է օգնել մեր եղբայրներուն: Պէտք չէ ամէն բան ձգել նպաստամատոյց Յանձնարարին վրայ: Ամէն մարդ պէտք է իր ձեռքէն եկածը ընէ: Անոնք որ Յանձնարարին միջոցաւ կ'ուզեն օգնել, կրնան իրենց նուէրները յանձնել անոր, անոնք որ զանազան պատճառներով չեն ուզեր Յանձնարարութեան միջոցով ընել իրենց և թշուառներուն միջև, պէտք չէ որ ասիկա պատճառանք ընելով մէկ կողմ քաշուին. թող անհատապէս կատարեն իրենց բարեգործութիւնը:

Այն մասին օրինակը արդէն սկսած է տեսնուիլ: Խումբ մը անձեր իրենց մէջ հանդանակութիւն մը ընելով տպուր բաժնած են պատըսպարեալներուն և կը լսենք թէ որոշած են իրենց այդ բաշխումը կանոնաւորապէս շարունակել: Ահա ասիկ զեղեցիկ գաղափար մը:

Թող ուրիշներ ալ խումբ մը կազմեն և շարաթիւր գոնէ անգամ մը քիչ մը միտ տան այս խեղճերուն: Ուրիշներ թող ջանան անկողին ու վերմակ հայթայթելու, մէկ քանիներ ալ թող ծխախոտ բաժնեն՝ որովհետեւ պէտք է զիտանք որ աւելորդը յաճախ չատ աւելի պէտք է մարդուս քան անհրաժեշտը:

Ասոնք ամէնքը սակայն անմիջական, առժամայ միջոցներ են, պէտք է աւելի հիմնական բան մը խորհիլ: Այս մասին առաջին առ-

թիւ մեր գաղափարը պիտի յայտնենք առանձին յօդուածով մը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կ. Պոլսի մեր թղթակցէն)

Կ. Պոլսի 5)17 հոկտ.

Տիգրան Արփիար Եղիպտոս մեկնեցաւ, հոն միտք ունի եղեր լրագիր հրատարակելու. «Արեւելք» լրագիրը ջնջուած է բոլորովին Դաշնակցականներուն հետ «միւսնաբախտ» ունենալուն համար իբր թէ: Շահնազար Յովհաննէս, «Հայրենիք» ի տնօրէնը սկսած է դատուիլ, Սաւրթանին դէմ և քաղաքական ոճիր գործած ըլլալու ամբաստանութեամբ, կառավարութիւնը կը փափաքի մահուան դատապարտել զայն: Այսօր վերջին նիստը տեղի կ'ունենայ. վրձնը և ուրիշ մանրամասնութիւններ կը հաղորդեմ ետքը:

Ունճեան Աբիկ քանի մը օրուան մէջ կատաղի յեղափոխական դարցած է թուրք կառավարութեան շընորհիւ և խիստ պատիժներ կրելու է. որպէս զի կառավարութիւնը կը լինէ 10000 ռակին գործ Ունճեան կը պահանջէ:

Վերաքննիչ դատարանի ընդհանուր դատախազին կողմէ հրատարակուեցաւ հետեւեալը. — «Խըռովարարութեան ամբաստանութեամբ բանտարկուած տպարանապետ Դարեգին Պաղտատեանի, թղթավաճառ Խաչիկ Խօրասանճեանի և յիշեալ տպարանի թուրքերէն զրաշար Մկրտիչի ընկերներէն, նոյն տըպարանի տնօրէն Յովհաննէս Արամեան որ փախած է, և որոյ հայ խռովարարաց դասին ըլլալը հաստատուած է քննութեանց թուղթերու ապացոյցներով, ըստ օրինի պիտի դատուի առաջի եղեռնադատատենի: Ի գիտութիւն դատական պաշտօնեաներու կը ծանուցուի որ յիշեալ Յովհաննէս Արամեանը ո՛ւր որ տեսնուի բռնեն և յայտնեն յիշեալ դատարանի բանտը:

Թիւ թուրք կառավարութիւնը առ այժմ մեզի չձարդեր, սակայն, չնսրհիւ վեհ. Սուլթանին, հալա-ծանքը և բանտարկութիւնները կը

շարունակուին, և գրեթէ ամէն հայու փափաքն է ժամ առաջ իր անձնական գործերը կարգադրել և ձգել երթալ այս անիծեալ երկրէն:

Շէյխ Բարթողիմոս և Չապըրն Նուրեան կը շարունակեն իրենց աղտոտութիւնները, նախկին պատրիարք Էջէքեանի ալ մասնակից ընելով իրենց աշխատութեանց: Ամբողջ ժողովուրդը անհամբեր կը սպասէ այն օրուան, ուր այդ վատ մատնիչները իրենց րժանի պատիժը պիտի գտնեն:

ՆՍՄԱԿԱՏՈՒՓ

Առ Պ. ԹԱՓԱՌԻԿ (Դաւրէժ): Ստացանք ձեր համակրալից նամակ և շնորհակալ ենք Ձեզ: Կը սպասենք ձեր գրութիւններուն զոր խոստացած էք յղել մեզ:

Առ Պ. ԱԻԵՏԻՍ ԱԼԻՏԵԱՆՑ (Պուրկաղ): Ձեր համակրական քաջալերութեան համար մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

Առ Գ. Դ. (Վենետիկ): Ձեր եամակին համար մեր շնորհակալութիւնը կը յայտնենք: Ինչոր կը գրէք հայոց գաղթելու խնդրին մասին արժանի է լուրջ նկատողութեան. այս մասին պիտի խօսինք յատուկ յօդուածով:

Կը խնդրենք մեր Պատ. ընթերցողներէն որ այսուհետեւ հաճին ստանալ իրենց թերթերը մեր ներկայացուցիչներէն որոնց անունները «Միութիւն» ի Յաւելուածին մէջ հրատարակած ենք: Այսպէս փոսթին ծախքերը մասամբ թեթեւցնելով դիւրութիւն մը մատուցած պիտի ըլլան մեզ: Կը խնդրենք մեր Պատ. ներկայացուցիչներէն որ թերթերը փութով յանձնեն իրենց տեղերը:

— «Միութիւն» ի 5 րդ. թիւը լոյս պիտի տեսնէ նոյեմբ. 15ին:

— Տառերու թերութեանց համար ներողութիւն կը խնդրուի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ—«ՄԻՈՒԹԻՒՆ»

Արտօտնատէր

Ա. ԳՕՔՔԻՆՈՍ